Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-981[2]-05.12.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Խաղային գործունեության կարգավորման մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-263-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետում «մարմին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերը փոխարինել «պետական կառավարման մարմին» բառերով:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող այլ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված սահմանափակումը տարածվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենքով լիազոր մարմին հանդիսացող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում պաշտոնավարման ժամկետի նկատմամբ, իսկ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ սույն օրենքով սահմանված պետական կառավարման մարմնում պաշտոնավարման ժամկետի նկատմամբ:

4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենքով լիազոր մարմին հանդիսացող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում հարուցված և ընթացիկ վարչական վարույթներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից, իսկ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված վարչական վարույթներն իրականացվելու են սույն օրենքով սահմանված պետական կառավարման մարմնի կողմից:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-981[2]-05.12.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Խաղային գործունեության կարգավորման մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-263-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետում «մարմին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերը փոխարինել «պետական կառավարման մարմին» բառերով:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող այլ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված սահմանափակումը տարածվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Օրենքով լիազոր մարմին հանդիսացող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում պաշտոնավարման ժամկետի նկատմամբ, իսկ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ սույն օրենքով սահմանված ~~կառավարության լիազորած~~ պետական կառավարման մարմնում պաշտոնավարման ժամկետի նկատմամբ:

4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Օրենքով լիազոր մարմին հանդիսացող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում հարուցված և ընթացիկ վարչական վարույթներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից, իսկ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված վարչական վարույթներն իրականացվելու են սույն օրենքով սահմանված ~~կառավարության լիազորած~~ պետական կառավարման մարմնի կողմից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981-05.12.2024-ՏՀ-011/0), «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981[1]-05.12.2024-ՏՀ-011/0), «ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981[2]-05.12.2024-ՏՀ-011/0), «ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981-05.12.2024-ՏՀ-011/0) ԵՎ «ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-981[4]-05.12.2024-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	««Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներ	Առաջարկում ենք ««Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «2.1-րդ» բառը փոխարինել «2.1-ին» բառով, ինչպես նաև 5-րդ հոդվածի համարակալումը վերանայել:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

2.	ՀՀ կառավարություն	«Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածով նախատեսվել է «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերը փոխարինել «***խաղային գործունեության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող մարմին***» բառերով, մինչդեռ Նախագծի 2-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսվել է, որ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Օրենքով լիազոր մարմին հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված և ընթացիկ վարչական վարույթներն իրականացվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, իսկ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված վարչական վարույթներն իրականացվելու են սույն օրենքով սահմանված ***կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից***: Առաջարկում ենք օրենքի 2-րդ հոդվածում կիրառվող վերոնշյալ ձևակերպումները համապատասխանեցնել միմյանց:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			Նույն դիտարկումը վերաբերում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի նույնանման կարգավորումներին: Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի մասերի համարակալումը վերանայել: Նույն դիտարկումը վերաբերում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի մասերի համարակալմանը: Բացի այդ, նույն հոդվածի 7-րդ մասի «ՀՀ» բառերն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ **արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ**: Նույն դիտարկումը վերաբերում է ««Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում		

			փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում և ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 10-րդ մասում կիրառված նույնանման բառերին:		
3.	ՀՀ կառավարություն	«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	««Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում կիրառված «կառավարության լիազորած» բառերն առաջարկում ենք վերանայել՝ նկատի ունենալով նախագծի 1-ին հոդվածով ««Խաղային գործունեության կարգավորման մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-263-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետում նախատեսված փոփոխությունը:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: